ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԻԾ
Պ-554[1]-09.04.2020-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված» բառերը փոխարինել «որոշակի» բառերով.
~~1.~~2. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Սպառողը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ սպառողն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը կրեդիտավորողի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն ստանալու կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, որի դեպքում կրեդիտավորողը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է:».

~~2.~~3. լրացնել նոր 3.1-ին մաս.

«3.1. Սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ~~(~~ռազմական~~)~~ դրության դեպքում: Արտակարգ կամ ~~(~~ռազմական~~)~~ դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր սպառողների կամ սպառողների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին սպառողի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով ու ժամկետներում:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքի 1-ին հոդվածի ~~1-ին~~ 2-րդ կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքի ուժի մեջ

մտնելու դրությամբ գործող այն իրավահարաբերությունների վրա, որոնց հետ կապված սպառողների կողմից այդ հոդվածով նախատեսված դիմումները ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ~~, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի~~:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 3~~2~~-րդ կետով լրացվող 3.1-ին մասն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա~~2021 թվականի հունվարի 1-ին :